Արձանագրություն № 3

«ՇԲՕ-ԳՀԾՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի գնահատման և արդյունքների ամփոփման նիստի

ք.Երևան, Զորափի 40

20/11/2018թ
ժ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Միրիջանյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ս.Մանուկյանը, Ա.Բաղդասարյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Կ.Սարգսյան

1. Գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի գնահատման մասին

(Վ.Միրիջանյան)

1.1. 14/11/2018թ. «ՇԲՕ-ԳՀԾՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման նիստի՝ № 2 արձանագրության 3.1 կետի 2-րդ չափաբաժնում նշված «2-րդ տեղ» բառերը կարդալ «գնային առաջարկը գերազանցում է այդ գնման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը»:

Հանձնաժողովը որոշեց.

1.2. «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի հայտը գնահատել բավարար հետևյալ հիմնավորմամբ՝ հաշվի առնելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, ինչպես նաև այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին կատարված հարցմանը՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ, տրվել է դրական տեղեկատվություն;

1.3. «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել հետևյալ հիմնավորմամբ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 19/11/2018թ. տրամադրած տեղեկատվության արդյունքում «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի արդյունքների ամփոփման մասին

(Վ.Միրիջանյան)

2.1 Հանձնաժողովը որոշեց.

ա/ № «ՇԲՕ-ԳՀԾՁԲ-19/2» ծածկագրով մրցույթի բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկների հիման վրա հաղթող (առաջին տեղ զբաղեցնող) ճանաչել «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ին՝ № 1 չափաբաժնի համար;

բ/ «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ին անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել «Ինտերնետ կապի հասանելիության ծառայությունների» գնման պայմանագրի կնքման առաջարկ;

գ/ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի, 1-ին մասի 1-րդ կետի № 2 չափաբաժինը հայտարարել չկայացած;

դ/ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում, տեղեկագրում հրապարակել հայտարարություն, նշելով գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Անգործության ժամկետ սահմանելու մասին

(Վ.Միրիջանյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի, 3-րդ կետի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում 5 օրացուցային օր: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կկնքվի անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Վ.Միրիջանյան

Անդամներ՝ _____ Ս.Մանուկյան

_____ Ա.Բաղդասարյան

Գնումները համակարգող՝ _____ Կ.Սարգսյան